



ԽԱՐԱՐԱԹԵՐ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏՆ Է՝ ԳՐ. ԹՈՐՈՍՆԱՆ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏՆ՝ ԵՍ, ԳՈՒՆ, ԱՆ, ՄԵՆԵ, ԳՈՒՆ, ԱՆՈՒՆ, ԵՍ

ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐ՝ ԱՐԺԱՐՈՒՆԻ ՍՐԲԱԶՍՆ, Ե ԱՆՓԻՍՐ, Գ. ԱՐԶՈՒՆԱՆ, Ա. ԴԱՍՊԱՐԱՆԱՆ

(Փոփոխելի)

ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ

Ես եմ «Շահիկ» եւ ինձ զատ «Շահիկ» չպիտի ճանաչուի: Եւ անուան պարտաւ ճեղ ճարտարական քերականի պիտի առնէ: Եւ փարսա կանխիկ պիտի դրկէ: Աւելի մարդ պէտք է յարգէ եւ գլխուն վրայ նսեցնէ զիս: Ո՛չ ոք պէտք է աչք ընեւ իմ փարսայիս, քո՛ղ աչքունցողին աւերէ: Ելլաւ: Պէտք չէ իմ փարսա ձեր կողորդը անցընէ: Պէտք չէ նեղանալ, երբ ձեր դրկած յողումները չսպունին: Պէտք է ձայն անգամ չհանէ եւ գլխուդ վրայ դնէ, երբ ձեզի դէմ գրուի այս սխալակներուն մեջ: Երբ ճառ բարկանալ, պէտք չէ մեղանշէ: Եւ երբ մեղանշելու մօտ ըլլալ, պէտք է... քաջալիս խմէ: Թիի 90 Տնօրէն Ռ. Սազանեան

Հարցէ՛ Ղալաթիա, Գուրչունու խան թիւ 7

ՀԱՐԱԹ 21 ՓԵՏՐ. 1909 Վ درعهده غلطهده قورشونلى خاندنه نومرو 90 زاغيك غزتمسى

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐՈՒ ՊԱՏՐԻԱՐԻՒՆ ՀԵՏ

Ո՛չ Հռոմի Պապն եւ ո՛չ ալ Սապապաղեան պապաէն վախճալու տեղ ունին:

Ni chaud ni froid ինծի համար:

Ո՛չ գրպանիս, ո՛չ թերթիս եւ ո՛չ ալ... Կրօնական զգացումներուն վրայ սա չափ տարբերութիւն կ'ընէ, երբ դէմ խօսիմ Հայ-Կաթոլիկներուն եւ բոլոր անոնց դէմ որոնք ընթերցող են Հ. Ներսէս վրդ. Փափաղեան անուն... շառապտան տեօնմէ քացախին:

Իսկ Կ. Պատրիարքին հետ էլ չենք միջ ըլլալ ինծի սուղի չպիտի նստի բնականաբար, քանի որ Արքայութիւն երթալու համար պէտք չունիմ ո՛չ իր աղօթքներուն, ո՛չ Ս. Անտօնի բարեխօսութեանը եւ ո՛չ ալ Հռոմի Պապին... հողային արտօնագրին:

Որովհետեւ գիտէք եւ կամ չի գիտէք, տարբերութիւն չընենք, թէ՛ Հռոմի Պապը, սաչափ ոսկիի եւ չեմ գիտեր քանի պալիս հնազանդութեան եւ խոնարհութեան փոխարէն արածնադիր մը կուտայ, կալուածագիր մը, որով կրնաս այս աշխարհիս մէջ վստահ ըլլալ - ինչ մեղք որ ալ գործես - թէ՛ անդին արքայութիւն ըստած վայրին մէջ բաւականաչափ գետին մը պիտի ունենաս եւ թէ՛ բացը չպիտի մնաս:

Հողային խնդիրները, արքայութեան մեջ աւելի շուտով կը կարգադրուին քան Անտուրի մէջ, ուր Բիւրտերուն խօսք չի կրնար հասկնալ Թուրք բարեխօսում! Կառաւարտութիւնը:

Ասկէ կը հասկցուի որ իրաւցնէ Պապը՝ Հռոմի մէջ նստելով, Պօղոս առաքելաւէն շատ աւելի դիւրութեամբ խօսք կը հասկնայ, քան թէ՛ Հիլմի փաշա Բ. Դուռնէն իր Վալիներուն եւ Կուսակալներուն:

Արդ մենք արդէն հիմակուրէն գիտենք թէ՛ մեր տեղը դժոխքն է, այն երանելի վայրը ուր ինծի պէս շատեր կան եւ կը յուսամ թէ՛ իմ բոլոր ծանօթներս, այր թէ կին, իր-

բեւ միակ էլլենք մեզ պիտի բարեհաճին դժոխք գալ:

Արքայութիւն...:

Տեղ մը ուր ապահով եմ թէ ոչ խաղալ կայ, ո՛չ խնդալ, ո՛չ ցատկել եւ ո՛չ պարել, ո՛չ լրագրութիւն, ոչ Կոմկոսսայ խումբ եւ ո՛չ ալ Բերայի ազգորիկ աղջիկները:

Արքայութիւնը ի՛նչ կարծէ առանց սա՛ վերիններուն: Մինչեւ իրիկուն նարտ խաղայ՝ Պօղոս առաքելաւին հետ, տալիսալուիսութիւն ըրէ՛ Թովմէփ Արեւմտեացիին եւ խնդարկութիւն Պետրոս առաքելին: Դո՛նէ հոն գտնուած կիները Հայ-Լայֆլէն ըլլան. չիտէ չիտակ խօսիլ մը անգամ չը գիտեր Մարիամ Մագդալենացին եւ Եւա՛ բաւական ծերացած ըլլալու է: Դործ չկայ արքայութեան մէջ... ճիշտ ինչպէս այժմ ոչ մէկ գործ կայ Թուրքիոյ մէջ:

Արդ հիմակուրէն դժոխքին բաժանորդագրուած ըլլալով, կրնանք տեսնուիլ Կ. Պատրիարք Սապաղեանի հետ, որ չեւ գիտեր թէ իր ո՛ր արժանիքին համար բերեր նստեցուցեր են... Սազը Աղաճի Պատրիարքարանին մէջ:

Հին բէթիմիայի մարդուն անունը բերան առնելու համար, աչք առնելու էր առնուողն չորս օր բանտարկութիւն եւ ութ օր թերթիք խափանում:

Որովհետեւ հինէն ի վեր Սազը Աղաճի Պատրիարքարանը եւ իր Կամարիլան, սովորութիւն ըրած է իր մէջ լուալու իր սղտոտները... ուրոնք այնքան շատ են ու այնքան ազատ:

Որովհետեւ Սազը Աղաճի թիւ լազարէ կղերը, վարժուած չէ լսելու, սեւին սեւ եւ ձերմակին... ձերմակ ըլլալը:

Որովհետեւ Հ. Ներսէս Փափաղեանի պէս մարդուկներ եւ Հ. Գաբրիէլ Մէնէվիլեանի պէս... լուսաւ մուտ կղերներ, Պապական են... եւ Պապէն աւելի... հարիւր էնկիւրիցիի չափ:

Որովհետեւ Հայ ըլլալը այնքան կարեւորութիւն ունի անոնց համար, որքան կարեւորութիւն ունի... Սահմանադրութիւնը՝ երազդին համար:

Եւ երբ աւսօր մենք բերանս կը բանանք, երբ կ'ըսենք բաներ ուրոնք իրենց ահանջին խորթ կը հընչեն, ո՛հ, կը կատիւն, ու ահաւանի կը կծրեն:

Բայց... ձեռքերնուն կուգայ այսօր այնքան բան որքան գործ կուգայ այսօր մեր պէքճիին Համիտ աղայի ձեռքէն:

Ու անցեալ օր, իրիկուն կողմ, ներս կը մտնեմ Սազը Աղաճի Պատրիարքարանէն:

Բարապանը որ գաւառացի Հայ մըն է եւ թէեւ Կաթոլիկ, բայց ո՛չ առնցմէ որոնք չա՛տ մօտ են... Պապին եւ ծնած են... էնկիւրիի հողին վրայ ներս կը հրամցնէ զիս:

Ներս կը մտնեմ Կ. Պատրիարքին՝ Սապաղեան Սրբազանի սենեակէն:

Սենեակին չորս կողմը խաչելու թիւներ, վարդարաններ, աղօթագիրքեր, Աստուածամօր պատկերներ եւ այս ամէնուն վրայ կը թափաւորէ Լեւոն Չրդ. Պապին պատկերը:

Կ. Պատրիարքը աչքերը կը քթթէ եւ Արարական ժպիտով մը, որ սփինքսի մը պէս անլուծելի կը մնայ, աթոռ կը հրամցնէ:

Վայրկեան մը կը դիտեմ այս Կեղեցականը, որ երջանիկ է եղեր եւ երջանիկ ըլլալէն ալ չբաւականանալով Գեր... երջանիկ է եղեր:

Եւ կ'ըսեն թէ աշխարհիս վրայ երջանիկ մարդ չկայ. ինչպէս չէ՞:

Սապաղեան Սրբազան անձամբ անձին կրնայ հերքել այդ բանը:

— Էհլէն ու սիհլէն... կ'ըսէ յանկարծ Սրբազանը, վայրկեան մը կարծելով թէ Եգիպտոսէն եկող Արաբ մըն է:

— Չեմ հասկնար հողեւոր տէր, կ'ըսեմ, միայն Հայերէն գիտեմ.

— Մալիշ...:

— Մարալի խնդիրն ո՞րն է:

— Ա՛հ, ֆէլլահնա չիք գիտէ...:

— Դժբախտաբար...:

— Անանկ է նէ... քրոյանցի տղալանի...:

— Չեմ հասկանում... Բիւրտ...

— Ի՛նչ կուգէք տեսնենք...:
— Կուգէի ձեզ էնթերվիու ընել Գեր... երջանիկ Տէր...:
— Յիսուս Մարիամ. հաչ անէ երեսիդ... ինչ պիտոր անես ինծի հետ էնթերվիու ընելով...:

— Ոչինչ. ընթերցողներուս նիւթ մատակարարելու համար:

— Շա՛տ բարի...:

— Հսէ՛ք Սրբազան հայր... ի՛նչ կ'ըսէք սա Սահմանադրութեան:

— Շատ լաւ բան մըն է... Էջմիածնական Հայերուն համար. բայց մեզի համար նշանակութիւն չունի, քանի որ մենք մեր գիտցածէն շաղ միշ չենք ըլլալ... Սահմանադրութիւն չէ, Հանրապետութիւն ալ եթէ տան Թուրքիոյ մեզի համար նոյն բանն է:

— Ո՛ւր են կաթոլիկներու գործերը. ի՛նչ վիճակի մէջ է Պատրիարքարանը:

— Աղէկ ենք, մենք Էջմիածնական Հայոց չենք նմանիր, մեր վարգապետները բարի մարդիկ են. մենք գէշ մարդ չունինք:

— Ինչո՞ւ կարգ մը եկեղեցիներու մէջ պատարագ չի մատուցուիր, նոյն իսկ ձեր քիթին տակ գտնուող Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ...:

— Օրասը քարա՛... ինծի կը վերաբերի ատ գործը, Աթոռինն է, Աթոռին վրայ ալ ե՛ս եմ:

— Ինչո՞ւ գոց է այսինչ եկեղեցին...:

— Օրասը տա՛ քարա...:

— Ինչո՞ւ...:

— Աթոռինն է...:

— Ինչո՞ւ... համար դո՛ւք...:

— Դարա տէտիք ա՛...:

— Ըսելէ հայ կաթոլիկներու բոլոր գործերը Ձեր Աթոռին կապուած են...:

— Հարկաւ... հայ կաթոլիկ ըսելը իմ Աթոռս ըսել է, ամէն բան իմն է, ամէն բան ինծի հետ կապուած է:

— Բայց կինէ՞րը... անոնք ալ կապուած են:

— Օրասը տա գարա՛...:

— Դոցենք Գեր... երջանիկ հայր...:

Բայց ներքեցէ՛ք, ըսել է ձեր մէջ երբե՛ք բաց իմն չկայ, ամէն բան գոց է...:

— Հրամմեր էք:

— Ինչ է ձեր կարծիքը Սահմանա...

դրութեան տեւականութեան մասին...

—Երկու օրէն ետ պիտի առնուի և այն ատեն դարձեալ Ս. Անտոնի շնորհիւ, էջմիածնական ըլլալով իրենց հոգիները կորսնցնող կաթողիկէները կը վերադառնան մեր գիրկը, որ ապահով ճամբան է արքայութեան:

—Յովսէփ Շէհիրեանը ինչու դեռ կը պահէք, հակառակ հին ունեւորին մէջ մի սակար մարդ մը ըլլալուն:

—Մենք մեր մէջը վնասակար մարդ չունինք և յետոյ ինչ որ ալ ըլլայ... կաթողիկէ է: Մենք գեղգեկ չենք...

—Բաւ լիցի, գեղգեկ չեն հայ կաթողիկէները և խալք է խառնեք կաթողիկէներուն գեղգեկ ըսողը...: Զէվգէլը մենք ենք, լուսաւորչականներս որ մեր անունները կը փոխենք և Յոսեփի անուններ կը դնենք, հայերէն չենք խօսիր, Սէնդէսթի կ'երթանք կիրակի օրերը, սոսիս ենք, հայեռեմ եռգ ընք եռգեմ... այլ փռանսերէն, հոգ չէ թէ սխալ ըլլայ Հայ եկեղեցիի առջեւ չենք անցնիր և մղկիթներու ու սինաիոկներու մէջ կը քարոզենք, երեսփոխանական փողովին մէջ թուրքերէն և ֆրանսերէն կը խօսինք...

—Օրհնեալ ըլլաք և Ս. Անտոն ձեզի պահպան, ճիշդ խօսող մարդը կը սիրեմ. մարդիկ կան որ կը կարծեն թէ՛ աս ըսածներդ մենք կաթողիկէներս կ'ընենք, ընդհակառակը դժուար ալ կը հաստատէք որ լուսաւորչականները կ'ընեն գեղգեկ լսաները...

—Ներեցէ՛ք, իրաւ է որ Մէնէվիլեան վրէ՛. չի կրնար քարոզել Հայ եկեղեցիին մէջ:

—Աս կողմէն իրաւունք ունի, տե՛ս ասոր ըսելիք չունի, Գերաշնորհ Մէնէվիլեան եթէ դժուար երթալ ուզէր, ձեր եկեղեցիին բեմէն կը քարոզէր, մանաւանդ էնկիւրիի մէջ:

—Կ'ըսեն թէ դուք, Գէր... երջանիկ տէր 40,000 ոսկի ունիք եղբ, ինչ պիտի ընէք այդ դրամը, ձեր հասարակութեան համար դպրոց չինէ՞ք պիտի:

—Դպրոցն ինչ պիտոր ընեն, ես անիկա ճիշդութեամբ միաբանութեան պիտի կտակեմ, որպէսզի ճիշդութեամբ խօսենք ասանին և փրկեն այս մեղաւոր աշխարհը դժոխք երթալէ...

—Հոռմէն դուրս փրկութիւն կայ...

Գէր... երջանիկ եկեղեցականին աչքերը խոշոր խոշոր բացուեցան, դէմքին վրայ սարսափ մը նկարուեցաւ և զոզդւալ սկսաւ...

—Յիսուս Մարիամ, Ս. Անտոն, ներէ՛ իր մեղքերուն, կը հայոյէ և չի գիտեր հայոյելը...

Ու գէր... երջանիկ Կ. Պատրիարքը Հայ-Հռոմէականներու՝ երկու ոտքով և 40,000 ոսկիի տէր Աթոռը, վայրկեան մը աղօթեց իմ հոգիին փրկութեան համար:

—Լսել է հիմայ մե՛նք, դժուար ալ մէջը ըլլալով, քանի որ Հոռմէն դուրս կը գտնուինք, կորսուած ենք...

—Զէ՛, չէ՛... մենք ապահովուած ենք. կաթողիկէները հիմակուրէն մեծ մասամբ արքայութեան մէջ տեղ ունին, երեք ոսկիին գլուխն է. առաջ աւելի սուղ էր. բայց մեր Ս. Պատրիարք տեսնելով որ շատ մը աղքատ կաթողիկէներ դուրսը պիտի մընան, արտօնագրին գինը իջեցուց որպէսզի դուրսը մարդ չի մնայ:

—Ա՜ք կ'ընէք, հոգեւոր տէր, կաթողիկէ մը համար ամէնէն ծանր մեղքը ինչ է...

—Հոռաւորչական ըլլալ...

—Ասոր դարմանը ինչ է...

—Վերադառնալ մեր ծոցը, պայմանաւ որ հինգ տարի անընդհատ առտու իրիկուն բաղնիք երթայ և ամէն իրիկուն հինգ հարիւր անգամ «Ավէ Մարիան» արտասանէ:

—Ինչ տարբերութիւն կայ Գէր... երջանիկ Տէ՛ր, Հայ-Լուսաւորչական մը և հայ կաթողիկէ մը միջեւ...

—Շատ խոշոր, շատ մեծ տարբերութիւն մը. մասնաւորաբար ձեր պոչը կտրուած չէ, իսկ մերինը... կտրուած է. պոչը կտրած ենք մենք...

Այս վերջին պարագան կարծեմ խօշն չի գնաց դուռը սպասող կամարիկացիին, որ ներս մտաւ ու գոցել տուաւ երջանիկ Տիրոջ... բերանը: Վայրկեան մը յետոյ փողոցն էի Սազը Աղա՛ն փողոցը, ուր եթէ կը գտնուի կաթողիկէներուն արքայութեան նախասենեակը, այսինքն Կ. Պատրիարքարանը, միեւնոյն ատեն դարմանալի զուգարկալութիւնով մը անոր vis à vis կը գտնուին նաեւ... երկրային արքայութեան սենեակները... մանճակները ըսով մէկտեղ:

Ասոր համար է որ Սազը Աղա՛ն փողոցէն ներս մտնողը, անպատճառ արքայութիւն կ'երթայ կամ Կ. Պատրիարքարանի ճամբով և կամ Տիկ. Մարիի՝ rendez-vousի տան ճամբով...

Գ. Բ. Թ. Ռ. Ս. Ս. Ս.

ՀԱՅԴ. Ռ. Ս. Ս. Ս. Ս.

ՊԻՊԵԱՆԻՆ ՏԱԼԻՈՐԻԿԸ

(Այս երգը կ'երգուի Տալիանիկի եղանակով)

Թէքիրտաղի դաւակ եմ խորթ Պոլսըցու պէս չեմ թուլամորթ, Սեփի գաւակ, տանձի որդի, Մեծ Սեղանին եմ յաճախող:

Թէքիրտաղի դաւակ եմ... աս կը խոնարհիմ Բիթին առաջ Զըմբուկի դաւաճ եմ լաճ Զեմ կերեր ո՛չ բիւլաւ, դժմաճ:

Նագարաք

Ռոտոսթոցի՛ք, էտիրնէցի՛ք, Թէքիրտաղի դաւակ եմ... աս Բիւլաճիութեան սիրոյն համար Ինչպի՛նք ըրտըզ յառա՛ջ յառա՛ջ:

×

Երբ իմ բերան բացի այն տեղ Պոլս պոլ տեսայ բիւլա համը Պիտ՛ը փակեմ ես իմ բերան Մինչ չաւարտի ամբողջ խաղան: Պապաս ծնաւ զիս սեխերու ծոց Հահանա մը ինձ օրօրոց

Խորող ծնայ, կ'ուզեմ մի հաւ, Կեանքիս բաժինն է խաչըս բիւլաւ: Նագարաք

Ռոտոսթոցի՛ք, ևն. ևն.

×

Ոտքըս նասըր, կուրծքս մազոտ ինչ փոյթ թէ դուք միշտ կ'ուտէք խոտ ինձ մօտ մէկ է խորող կամ հաւ, Բաւ է գտնամ քուչքուչ բիւլաւ:

Ստամոքսըս է խիտ չարքալ Պոլ նստելու եմ ես շատ վարժ Բընակարանս է խորհրդարան Ընկերներս Տաղ-Սպարթեան: Նագարաք

Ռոտոսթոցի՛ք, ևն. ևն.

×

Երեսուն ոսկի, մէկուս, բաճար, Կուտ չեն արծիւ ինձի համար Թող տան ինձի պոլ պոլ բիւլա Սակէ անդին մընաս բարեաւ:

Խօսք մը չեղիր իմին բերնէս Ես չեմ ջանջան Զօհրապի պէս Եաշա՛ միլլէթ, եաշա՛ բիւլա, Վէրին պանա տաիմա բիւլա:

Վերջին Նագարաք

Բիւլա՛, բիւլա՛, կեցցէ՛ բիւլա, Բիւլա ուտենք, եղբա՛րք, բիւլա, Mangeons բիւլա, toujours բիւլա Նաճաղումե բանա բիլա: Ընկերս Կիկո



ԵՈՒՂԱՐԱՆՈՐՈՒԹԻՒՆ ԲԱՐՁՐ. ՄԱՍԼՈՅ ԿԱՆՈՆԱԳԻՐԻՆ

Երէկ (ու եւ է երէկ մը որ սա-կայն թուական չունի) Օսմ. Խորհրդարանի Ս. Հագըր մատուռին մէջ տեղի ունեցաւ Բարձր. Մամուլի Կանոնադրին յուղարկութեան տխուր հանդէսը ի ներկայութեան երկուսու խումուն բազմութեան:

Խորհրդարանին Ս. Հագըր մատուռը լուսադարձուած էր և մէջտեղը բարձր մահաբեմին վրայ կը հանգչէր հանգուցեալ Բարձր. Մամուլի Կանոնադրին մարմինը, ընկուղէնիէ դազաղի մը մէջ: Դաճաղին շուրջը շարուած էին հսկայ մոմեր գրչի ձեւով:

Ծաղկեպսակներ զրկած էին՝ Հագըր պէյ և ընտանիք, Տէր և Տիկին Պետական Խորհրդոյ անդամք, Տիար Պապիկեան, Տաղաւարեան և Սպարթալի, Տէր և Տիկ. Համիտեան Որդիք, Տիար Հին Ռէփիմ և Զաւակունք, Տիար Յ. Արիփար և ուրիշներ:

Արարողութեանց կը նախագահէր Տ. Ա. հմէտ արքեպ. Բիլա, իր շուրջը ունենալով Պոլսոյ, Մակեդոնիոյ, Անատոլիոյ, Արաբիոյ մեղրապոլիտ-երեսփոխան-արքեպս. ներք. Տ. Տ. Զօհրապ, Հալաճեան, Վարդգէս, Գեղամ, Արմէն-Կարօ, Մուրատ արքեպիսկոպոսները և Բանէջտօրօֆ, Գօղմիտի, Հիւսէյին Ճափտ, Տալչէֆ, Բուսիօ, Իսմայիլ Բէճալ Սըրբազանները, վարդապետներ և քահանաներ:

Առաջին օթեակին մէջ սգակիր կեցած էին Սալթան Համիտ Որդիները: Իսկ միւս դասերուն մէջ Հոռմի դեսպանը, Պետական Խորհուրդին անդամները, Հիլմի փաշա, Խալիֆէթու Յ. Կոր էֆ. Պապիկեան, Խալիֆէթու Տոքթ. Նաղա-րէթ էֆ. Տաղաւարեան և Ֆէլիա-մէթու Սպարթալի էֆ.: Ինչպէս նաեւ Տաճատ աղա (նախկին վարդապետ), Հ. Գարրիէլ Մէնէվիլեան, Հ. Ներսէս Փափազեան (կաթողիկէ), Կ. Պատրիարք Սրբազանը, Շարարու-նի Սրբազան, Արիկ Մուպահհա-ճեան, և ուրիշ այս կարգին որոնք սեւեր հագած էին և տխուր էին իրենց սիրական կիներ կորսնցնող մարդու մը չափ:

Ներկաներուն մէջ կը նշմարուէին բոլոր հատնաւ գրողները, բոլոր հին ունեւոր մէջ անօթի և նոր ունեւոր մէջ փորերին կուշա եղող խմբագիրները, բոլոր աղգ. երեսփոխանները, մէկ քանի վարդապետներ և քահանաներ:

Ծոպերը ընած էին՝ Եր. Թօ-լայեան, Յակոբ Տէր-Յակոբեան, Շաարչ Միսաքեան, Գեղամ Բար-սեղեան, Զարեհ Նեճցէ, Աշոտ Բէշեան և Ընկեր Կիկո:

Իսկ կերտները կը կրէին. Եր. Տէր. Անդրէասեան, Եր. Սրմաքէ-խանեան, Բոսիմ, Միմոն Զէօպէկ-ճեան, Բիւլանդ Բէշեան, Գարեգին Պոյաճեան և Արթաթի Սանտալճեան:

Մեռելական արարողութիւնները սկսան դաշն հանդիսաւորութեամբ և հետզհետէ ձայններին բարձրացնելով, բոլոր տիրացունքը արտասանեցին «Հոգեպ»՝ խեղճ Բարձր. Մամուլի նոր կանոնադրին...

Ետոյ Տ. Կիկո Արքեպս., յատուկ արտօնութեամբ բեմ ելաւ և բնարան ունենալով Համիտ մարդարէի «Մարդոյ որպէս խոտոյ եմ անուրբ իւր» խօսքը, խօսեցաւ մէկը իր դեղեցիկ և սրտառուց դամբանականներէն՝ որոնք այնքան ցնցող են ու լացնող, խնդացնող ու ճախեցնող: «Հանգուցեալը, ո՛վ բարի ներկաներ, մէկն էր անոնցմէ, որոնք սա դասին մէջ կեցած են. ան ուղեց որ մեր խորը անիծէ, մեր գրիչը կտարէ ու մեր հացին պատճառ ըլլայ: Ծնաւ մութ գիշեր մը և մկրտուեցաւ Պետական Խորհուրդին մէջ. բայց հիւսանդկալ էր ծնող մանուկը, որովհետեւ հայրն ալ, Հագըր պէյ՝ այնքան քաջառողջ մէկը չէր: Խեղճ հանգուցեալը բարի քրիստոնեայ մը չէր. ընդհակառակը չհետեւեցաւ Բիւստոսի պատուիրանին որ կ'ըսէ «Բարի՛ արարէք ատելեաց ձերոց» և «Սիրեցե՛ս զընկեր քո իրեւ զանձն քո»:

«Ուրեմն մի՛ լաք, այլ խնդացէք, մի՛ հեծկտաք, այլ ցատկաւեցէք, որովհետեւ հիմայ այլ եւս կարգը հին ընթերցաններուն է «Լալ եւ կրճաւ առամանց»:

«Սառնաղալին գնա՛ ուրեմն ով Մամուլի նոր կանոնադրի, Սանդա-րամէտը քեզի կ'սպասէ: Այն օրը որ դժուար առողջանայիր և մեր խմբագրատուններէն Գեղամ մանկիր, ես՝

Ընկեր կիկոս, ամենէն առաջ պիտի կախուէի կամուրջին գլուխը... յօրինակ այլոց: Խոտ էր և խոտի մը չափ ազրեցար. քանի մը ամիս միայն:

Դամբանական Սրբազանը յետոյ երկնային միջնորդութիւն հայցեց, հանգուցելոյն ազգականներուն, բարեկամներուն, ծանօթներուն և համակրներուն:

Դամբանականն յետոյ խօսք առին ներկաները և խօսեցան կարգ մը դամբանականներ, ուրկէ վերջ դադարը ներկայ կարգ մը չեօքմիներու կողմէ տարուեցաւ ազգանոց և ամբողջութեամբ հին ուժով... կանոնադրին քով՝ ընտանեկան յատուկ դամբարանին մէջ:

Այրի Տիկ. Մամուլ, Տէր և Տիկ. Հազգը պէյ (ի Հոռոմ), Տեառք և Տիկնայք Տախտը (ի Նշան Թաշ), Տէր և Տիկ. Սուլթան Համիտ և Զաւակունք (Երլորդ), Տիար Հիլմի փաշա (Բ. Դուռ), Տէր և Տիկին Քէմալ պէյ և Զաւակունք (Նախկին Տպագրական Տեսուչ), Այրի Տիկին Հին Ռէֆիմ և բոլոր ունեւորները Զաւակները, Տիար Յ. Ալիփար (Ազատ Մամուլին թշնամին՝ ի Թօքաթլը), ինչպէս նաեւ Համիտեան, Թահսինեան, Իզդէտեան (Էգիպտոս), Եսպըճեան (սու աշտմ Բերա) և բոլոր ընտանիքները իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն ամէն անոնց որոնք չի հաճեցան ողջնցնել հանգուցեալ:

ԲԱՐՁՐ. ՄԱՄՈՒԼԻ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ և ընդհակառակը իրենց ուրախութիւնները յայտնեցին այդ տխուր առթիւ:

ՄԵՐ ՄՐԱՄՏՈՒԹԵԱՆ Բ. ՄՐՑԱՆԱԿԸ

Ամեն կողմէ շնորհակալանք... հետազոտիչ կը ստանանք մեր բացած սրամտութեան մրցումին համար:

Քա՛ն լիցի, մեր պարտականութիւնն է մեր լայկան ժողովուրդին լայկան միտքը սրել դէպի զուարթ եւ այս առարկայկան տարբերակները պիտի կատարենք մինչեւ մեր վերջին շունչը:

Եւ կարծենք քե մեր քրտնը քեւ Ոգոյ չի փրկեր, բայց իր օգուտը ունի, քանի որ ժողովուրդին կարծիքն է որ կը հաւաքենք տնտեսութեան խնդիրներու մասին, առանց այդ կարծիքներուն մեջն մեր գործին եկամները միայն ընտրելու:

Անցեալ շաբաթ Միմաս Զեբազի եւ Միմրգաս Հայկազնի միջեւ բաղդատութիւն մը ըրինք եւ տեսանք քե ժողովուրդը ի՞նչ կը մտածէր անոց մասին:

Այս շաբաթ ալ ձին եւ նոր Ալիփարներու բաղդատութիւնը ունինք եւ պիտի լսէք քե ի՞նչ կը մտածեն մեր ընտրեցողները:

Չենք կարծիք որ ասիկա տեսնելու պատճառ մը ունենայ Յ. Ալիփար, որ ժողովուրդական դէմք մըն է, եւ այսպէսով պիտի լսէք քե ի՞նչ կը մտածէր — աղէկ կամ գեշ:

Մեր երկրորդ հարցումն էր. «Ի՞նչ տարբերութիւն կայ ձին քեմալի Ալիփարին եւ նոր քեմալի Ալիփարին միջեւ?»

Ա. ՄՐՑԱՆԱԿ

Հին քեմալի Ալիփարը Իզմիրցիներուն տալիս անունն էր, իսկ նոր քեմալի Ալիփարը Պոսեցիներու տալիս անունն է:

Շաղրանկարիչ

Բ. ՄՐՑԱՆԱԿ

Նոր առնուած կրամֆօնի բազմ մը: Առաջ՝ նոր ըլլալուն պատճառաւ մտիկ կ'ըլլուէր: Հիմա՝ հինցաւ՝ զուլա կը ցաւցնէ:

Գ. Կիւմիւրկերտուն

«Կը խնդրուի մեր Բ. հարցումին Ա. և Բ. մրցանակները շահողներէն որ բարեհաճին մեր Գործունէութեան խանութի կայսրութեան մայրաքաղաքը հրամայելու որ մեր առաջին սենեկապետը պիտի տայ իրենց չէք մը յուսանկարիչ Սիմօնի վրայ, որպէսզի երկուսն իրենց աղուոր դէմքերը քաշել տան»:

Մնացած պատասխաններն ալ կը հրատարակենք ստորեւ, առանց մեր կողմէն բան մը աւելցնելու կամ պակսեցնելու, այլ լոկ արձագանքը ըլլալու համար ժողովուրդին կարծիքին:

× Առաջ էլիւաղէ, Հիմա քեմաղէ: Բ. Լ. Մ.

× Ալիփարի Սակարանը. Հին քեմալի ատեն գոցուեցաւ յօգուածը՝ մէկ ոսկիի:

Նոր քեմալի օրով բացուեցաւ մէկ յօգուածը՝ 15 զրուչի:

Զարեհ

× Հին քեմալի Ալիփարը քալիս-նական հայ մըն էր, իսկ նոր քեմալի Ալիփարը քալիս-նական խմբագիր մըն է:

Յոր

× Հին քեմալի Ալիփարին միայն ոտքը կաղ էր, իսկ հիմա կը տեսնուի թէ նոր քեմալի Ալիփարին թէ՛ ոտքը կաղ է և թէ՛ միտքը՝ կալս:

Թօլիս Եփրան

× Առաջ՝ ներկուած էր, իսկ հիմա, Սահմանադրութեան շնորհիւ, ներկը վրայէն թափուած:

Մուրատ

× Յ. Ալիփար հին քեմալի ատեն աղանի մըն էր, բայց նոր քեմալի օրով ամօթէն ա՛յնչափ քեօմիլիլիլը կեցաւ որ սենալով՝ ազուաւ դարձաւ:

Արմենակ

× Հին քեմալի ատեն Ալիփար մեր պաշտելի կուռքն էր, իսկ նոր քեմալի օրով՝ անկեալ հրեշտակ մը եղաւ:

Ս. Ս.

× Դոնէ հին քեմալի օրով Ալիփարի գրուածքները կարդացուելիք բաներ էին, իսկ նոր քեմալի օրով քեմալիքը քիւլիէ դարձան:

Առաջ, փառացի անցաւորի... Յոր. Թ...եան

× Յ. Ալիփար չօգի է: Հին քեմալի ցուրտ քաղաքակա-նութեան ժամանակ օգին մէջ կը տապալկէր:

Հիմա որ նոր քեմալի քաղաքականութեան հետ տաք վերաբերում մը ունենալ կը թուի. Յարութիւն Ալիփար այս տաքութենէն հալեցաւ:

Ա. Թաքարեան

× Ալիփարին տարբերութիւնը սա է որ, հին քեմալի ատեն Իզմիրի օղը կը չնչէր, իսկ հիմա Պոսսոյ օղը կը կլլէ: Օր. Օնօրիք***

× Տիար Յ. Ալիփարի հինին ու նորին միջեւ եղած տարբերութիւնը իր ձեռքի քնարն է որ հինին մէջ չատ զարնելուն մաշած է և այժմ անախորժ կը հնչէ:

Խնդրեմ, մի՛ մեղադրէք զաւալըն, երբ աս ու ան դուռը կը չալէ՝ քնարին հինցած լարերը նորոգելու, որ ա՛լ խեղճին ունակութիւն մը եղած է:

× Հին քեմալի Ալիփար Համբաւաւոր էր դարձաւ նոր քեմալի Ալիփար Պնակալէզ մի՛ նա քաշ:

Օր. Զ. (Կես)օմ

× Հին քեմալի օրով Յ. Ալիփար սոխակ մըն էր դալլալող, իսկ ձ l'heure qu'il est... բու մըն է աւերակաց:

× Յ. Ալիփարի տարբերութիւնը սա՛ է որ հին քեմալի օրով կիներու փէշերուն տակ ալքուար, իսկ հիմա մեծ աղաներու բանթալօնին տակ: Հրանտ — Թորոմ

ԱՊՏԱԿՆԵՐ

ՁԻՐԿ, ԲԱՅՑ ՄՏԻԿ ԸՐԿ՝

ԳՈՐԾՈՒՆԸ ԽԱՆԻ ԿԱՅՐՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԵԱՆ Գ. Ի. Ա. Ն.

Մեր կալաւաններու աղետագիրները եւ հաւանքները

Առ Նորին Վեհափառութիւն Ընկեր Կիլո Գործունէութեան Խանի Կայսր

Վեհափառ Տէր

Ա. — Հոս հպատակ մը ունիք որ վարժապետ է. ամէն իրիկուն Զօրյուի գինետունը 2—3 լիւ կը խմէ և կը պարծենայ թէ աղայ մը երբ ու եւ յանցանք մը կը գործէ վարժարանին մէջ կ'արտաքսէ անմիջապէս: Այս վարժապետին կը հարցնենք թէ իր այս միտքով է որ աղայներուն կրթութիւնը կուտայ:

Բ. — Մ. Ա. ...ն անձը Ազգ. Երեսփոխան ըլլալ կ'ուզէ. ինչ ընելը չը գիտեր: Այս պատճառաւ Սամաթիոյ Գարաբաղին կազինօն թատրոնի վերածեց որպէս զի թաղեցիին սիրտը սիրաշահի եւ երեսփոխան ըլլայ. բայց թաղեցիին չէ՛ր գիտեր իր ինչ տեսակ մարդ ըլլալը:

Գ. — Թաղ. Խորհրդոյ ուշադրութիւնը հրաւիրեցէք որ վարժարանին մէջէն ծեծը վերցնէ և կարգի կանոնի դնէ վարժարանը:

Դ. — Կարճահասակ Հայունի մը թաղը և թաղին երեսփոխարէնութիւնը իր պօմայայով օղը պիտի հանէր բայց կայսրութեանը սերքին գործօց նախարարը խնդրեց քննած ըլլալով պէտք եղած հրահանգը տուած է եւ

Հայունին խոստացած է պսկէց վերջ մէկ երեսփոխարէն հետ միայն յեղափոխութիւն ընել: (Մի՛շտ յետապնդեցէք այդ Հայունին որ պօմայաները սխալ տեղ չի նետէ. Մ. Գ. Խ. Կ.):

Ե. — Կարգ մը երեսփոխարէններու, ինչպէս նաեւ Յ. Ա. ին պէտք է յանձնարարէք որ գիշերուան ժամը 5ին կամ 6ին ատենները ատրճանակ չի պարպեն և թաղեցիին անհանգիստ չընեն գիտենք որ ատրճանակ ունին:

Մեծափառ կայսրութեանը յանձնելով այս ժողովանքները, կը խնդրենք որ պէտք եղածը տնօրինէք:

Կայսրութեանը հաւատարմութիւնը յայտարարեց

***Մեծ ղեմադիր Հայկազ Միհր-դատ դարձեալ վաղը ներկայացրեմունի եղեր...: Ասոր սօնը՝ Ալ չի՛ բաւեր...

***Վաղը Սկիւտարի մէջ շիրքէթի դէմ խոչը միջինը մը պիտի դուռներն Սկիւտարի ամենազգի բոլոր բնակիչները... խորը անիծելու համար Շիրքէթին: Ալ այս անգամ հապը կը կլլէ Շիրքէթը:

***Բերայի թաղ. խորհուրդը կը բաղկանայ... Եօթը կեսարացիներէ: Կեսարացիները կը տիրեն Պոլսոյ և պատերազմական նախարարը տեղեկութիւն չունի: Այսպէս Կեսարի հայրենիքէն են... Հալաճեան, Քէչեան, Նսաեան. Սթամպուլեան, Ֆնտզեան, Թահթապուրեան և Ղազարոսեան:

***Սկիւտարէն Առնաւուտ գիւղ փոխադրուող և մեր կայսրութեան թղթակիցը Վ. Ս. կը գրէ թէ՛ Եսայի մարգարէին մէջը՝ Հրանդանունով, վերջերս պատուանշան ըստացիր է, առանց Կայսրութեան հրաւանին, եւ նի չարչի կանանց կայսրութեան կողմէ: Խեղճ Եսայիչաւան երբեք չէ հաւանք այդ պատուանշանին եւ սկսեր է լալ ու գրլ-խուն մաղերը փիթտել և այնքան փիթտեր է որ գլխուն վրայ մաղ և մէջը խեղճ չէ մնացեր: Վախ օղում վախ, մայրիկը եթէ իմանայ ի՞նչ կը բռնէ. մայրիկը մեղք է, քեզի ալ մեղք է, շիշի մէջ գտնուող աղբարիկներուն ալ մեղք է:

***Սկիւտարի Տիկնանց միւռթիւնը կը ծանուցանէ թէ չարթու մէջ որոշեալ օրեր (որ օր ըլլալը չենք յիշեր) բաց է Սկիւտարցի տիւկիներու եւ օրիորդներու... առջև: Մուտքը աղատ է: Եթէ այս գրածին չէք հաւատար կարդացէ՛ք Մանգուսմէն:

***Անցեալ կիրակի ցերեկ կատարուեց է բացումը Սկիւտարի Յաւաջ մէղաթական Անմիաբանութեան քերական-ընթերցարանին: Այս առթիւ Տիրան Զրաքեան որ միւռթիւն... կախ անդամներն է, բանախօսեր է ընթերցարանը նմանցնելով առանց խոհանոցի ճաշարանի մը. պինդ լաւ սակայն կ'երեւի թէ մարդուկին փորը անաթի էր, որովհետեւ ճիշդ քրտան վայրկեան խոհանոց բառէն դուրս չելաւ: Ինչ կայ զարմանալու, ո՞վ Սկիւտարցիներ, Զրաքեան բնական է որ խոհանոցէն դուրս չպիտի ելլէ, քանի որ լեռուն փող և... վարժապետ բառական հօգու են իրարմէ: Tournez s'il vous plait.

ՇԱՐՈՒՆԻՆԻ ՍՐԲԱՋԱՆԻՆ

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Պրուսացի ջերմուկները եթէ չըլլային, այն կազդուրիչ գաղջ ջուրերը եթէ ցամքէին Շարաբունի Սըրբազան թերեւս այսօր ոչ եպիսկոպոս էր, ո՛չ առաջնորդ, ոչ տեղապահ։

Բարեբաղդաբար նախախնամութիւնը օր առաջ կարգադրեր է ի պատիւ Ն. Սրբազանութեան որ իր բազմադարձ վիճակին տքնութիւններէն(*) սպառած ոյժերը գտնէ այն հեշտաւէտ լողարաններուն մէջ և ամառը... Գրնալի ափունքները։

Արդարեւ, եթէ ակնարկ մը նետենք Ն. Սրբազանութեան առօրեայ կեանքին և և դրադուսներուն առատութեան վրայ, նոյն իսկ շատ քիչ պիտի գտնանք այս ջերմուկները։ Ներկայացնէք որ Սրբազանը առատուն անկողնէն կ'ելլայ. խռոված, ջղաճրճիւ վիճակ մը ունի. կը սկսի սենեակին մէկ ծայրէն միւսը շրջիլ քիթին տակէն ցնակալեմ կամ սաւաղնի եղանակ մը երգելով։ (Սրբազանը արեւելեան երաժշտութեան մեծ սիրահար մըն է)։ Բաւական ժամանակ այս վայրէջքէն, ձեռքերը ետին կապած և աջ ու ձախ թքնելով (այս ալ Սրբազանին տկար կողմերէն մէկն է)։ Յանկարծ դուռը կը բացուի և նամակներու դէպ մը կը բերուի Սրբազանին ոչ գէժքը կը թթուցնէ, և գիտի մը առջեւ կեցածի պէս ետ ետ քաշուելով, ու միշտ ձեռքերը կապած ետին՝ կը կանչէ քարտուղարը, և

— Բայ նայինք նամակները ի՞նչ կ'ըսեն կոր։

Քարտուղարը կը բանայ առաջին նամակը և առաջին տողերը կարդալէ վերջ։

— Սրբազան Պ. գիւղէն գանգատագիր մըն է. եկեղեցական և կըրթական գործերը անկերպարան վիճակ մը առեր են. թաղական խորհուրդը հրաժարեր է. քահանան և կեղեցին դողեր է. ժողովուրդը հոգեւոր մատակարարութենէ զրկուեր է. սով կայ. երկու հոգի անօթութենէ մեռեր են և...

— Էյ, ինձի՛ ինչ. արթըն գլուխ կ'ուռեցնեն կոր. շատ եղան. սով կայ. սով կայ. ի՞նչ ընեմ. չեն հարցներ քի Սրբազան երէկ գիշեր կըրցա՞ր քնանալ. ցաւերդ ի՞նչ եղան, քէյֆդ տե՛ղն է։

— Ի՞նչ որոշում կուտաք Սրբազան։

— Բան մը ըրէ։

Ուրիշ նամակ մը կը կարդայ.

— Դ. գիւղին մէջ ջարդի վախ կայ. թուրք խուժան մը կը պատրաստուի յարձակում գործել. կ'աղաչենք, կը պաղատենք կուսակալին զիմէր. կեանքերնիս վտանգի տակ է։

— Էյ, ո՞վ պիտի երթայ. ըսէ

(*) Այս անունը առնուած է Սէթ Պաշիկ (Պրուսա) շարաբ հոռոզ տէրէն։

Վարդան վարդապետին վախն տեսնայ. քոնա՞ծ շիյ պի. ես ի՞նչ պաներո՞ւս նայիմ մի թէ անոնց զըրզընեւրուն։

Քարտուղարը ուրիշ նամակ մը կը պատրաստուի բանալ։

— Հերիք է, հասկցուեցաւ. առջնքն ալ սայղըսդ են. կ'օգտէ. քիչ մըն ալ ցորեկէն ետքը կը նայինք. ես կ'երթամ կոր։

Եւ Սրբազանը՝ հովանոցը թեւին զարկած ճամբայ կ'ելլայ. գլուխը աջուձայն ձօճելով կը բարեւէ անցորդները, մէկիկ մէկիկ որպիսութիւնը հարցնելով իւրաքանչիւրին ընտանիքին անդամներուն, մէյ մէկ քիչ հանգիստ կ'առնէ Հայոց խանութներուն առջեւ, և իրիկուան դէմ կը դառնայ Առաջնորդարան, յոգնած, ուժաթափ։

— Էյ, ուրիշ բան չկա՞ր ես նամակներուն մէջ. ամէնքն ալ մէկ բեւրան կը խօսին կոր. սով, նորէն սով. աղքատութիւն, թաղական խորհուրդի կու, քահանայի ծեծկըւտք. առնք ամէնքն ալ տարին տաններկու ամիս կ'իմացունեն. քըղտըր քըղտըր եէ։ Կարեւորը մոռայ. դպրապետին ակնջէն քաշուել է, սապանիները չըլլար կոր կոր. ճիճաղքեարին առանկ չեն քաշըւեր. անուշ կապելու է։

Ու Սրբազանը մեղմօրէն կ'սկսի երգել, գլուխը օրօրելով, զգլխի հեշտութեան մը անձնատուր։ Նախախնամութիւնը եթէ կազդուրիչ ջուր մուկները չհաստատէր Պրուսացի մէջ, Շարաբունի Սրբազան հիւանդ անկողին պիտի իյնար, չկրնալով... տոկալ Առաջնորդարանի ջլատիլ ճախատութիւններուն։

ԱՇՈՏ ՔԵՉԵԱՆ
(Գեղծ)

ՓԱԿՈՒՄ

ԳՈՒՄԳԱՐՈՒԻ ՀԱՆՐԱՄԱՆՈՅ

ՈՒՆՍՈՒ ԾՈՒԼԱՐԱՆԻՆ

Վերջապէս Գուգ Գարուի, Կէտիկ վաշայի և շրջակայ թաղերու երիտասարդ ծոյղերուն վախը եկաւ ելաւ։

Անցեալ օր իրենց ամենասիրելի հանգստավայրը եղող Ռէսթ-Մուլումըն ալ չբանալու համար։

Աստուած լուսաւորէ նորա հոգին, լաւ էր նա՛, հեղահամըր, խոնարհ ու վեհ սիրտ մը ունէր նա, ա՛ն էր որ զրկարաց կ'ընդունէր ասդիլ անդիլ սրճարաններէն, ընթերցատուններէն, գինետուններէն, և իրենց տուններէն վախուժած երիտասարդները, ան էր որ իր գոնները բացած էր դպրոցական ջօճուկներու համար, ան էր որ մասնները տրամադրելի կ'ընէր խոշոր խոշոր մարդոց, մեծ հանճարներու և բանասերներու, նման Հայր Աստուծոյ, Տիգրանի ևն. ևն. հազուադէպ մարդերու, և վերջապէս Ռէսթին էր որ կ'ընդունէր ամէն անոնք որոնք չէին կրնար ուրիշ տեղեր նստիլ առանց մեքայիկի։

Վեհ սիրտ մը ունէր, որովհետեւ կը գթար ան երիտասարդներուն

վրայ որոնք տանողի չքաւորութեան ախտէն վարակուած էին։

Աղիւ և բարեացակամ էր ան որովհետեւ, խաչվէն խաչվէ՞ք վերջը եթէ մէթալիկ տայր չնորհակալ կ'ըլլար, եթէ չտայր նորէն չնորհակալ կ'ըլլար։

Ռէսթը իր Բիր Եանիով դրամատուն մըն ալ էր կամուրջի կամթռնի փարա չունեցող պարոններուն պղտիկ (20-30 փր.թ) փոխատուութիւն ալ կ'ընէր, անգամ մըն ալ չառնելու պայմանաւ և Բիր Եանիին առնելիքներ... կը մնային միշտ։

Ահա Ռէսթ-Մուլարանին բարիքները թուեցի ձեզ, մնացածներն ալ դուք թուեցէ՛ք։

Հիմա խնդիր է թէ Պ. ծոյղերը ո՛ւր պիտի ընտրեն իրենց հանգստավայրը ուր ընդունուին առանց մէթալիկի որ ըլլայ ընդարձակ, որ ըլլայ հալիւ կազիով լուսաւորուած, ուր ըլլայ մի խըմպոյլ Բիր Եանի, ուր ըլլան առօրեայ թերթեր։ որ ունենայ վերնայտիկ մը, որ ունենայ կրկնակ դուռ իրենց զոնչիւնները դուրս չլլելու համար, ո՛ւր պիտի դառնան ասանկ, և և այս պայմաններով տեղ մը որուն անունը դենն Ռէսթ, միշտ Ռէսթ։

Տեսայ շատերը որ նոյն գիշերը Ռէսթի դռները փակ գտնեցնուն զարմացկոտ հայեացքներ կը նետէին քեփիկներուն որոնք կուլային կարծես։

Կ'անձրեւէր ան գիշերը։

Շատեր հովանոց ալ չունէին, շատերու լաստիկները ծակ ըլլալով ջուր առած՝ ոտքերնին լճակի մը մէջ ըլլալու պատրանքը կուտար, առնք որ տանոց մը ունէին կը մըտնէին սրճարան մը, մնացածներն ալ կը սպասեն քիչ մը և կը նային որ բացուելիք չունին Ռէսթը, կը քաշուին իրենց խկական տուններնին զլիկոր ու մօտակոտ։ Շատեր ժամադրութիւն տուած էին իրենց բարեկամներուն քիչ մը տեսնուելու և զեկզեկիմիջ ըլլալու համար, ասոնք ալ յուսահատ ետ դարձած էին։

Ու գոյուած էր Ռէսթը. ալ հոն չէր Բիր Եանին։

Եղածը եղած է բարեկամներս. մտածելն բան մը չկուր։ Ուստի՛ չո՛ւտ ուրիշ կարգադրութիւն մը ընել կարեւոր է, կամ այն է, Ռէսթ մը գտնել, և կամ վարակուած ախտերնիդ (այսինքն ծուլութիւն և օթլախճիւթիւն) բուժելու ճորտ մը։

ՆՈՅ ՆԱՋԱՊԵՏ

Գուգաբու
Յ. Գ. — Վերջին պահուն հեռագիր մը սոսիք թէ Գուգարուի երիտասարդներուն ծոյղերը միահաղոյն որոշած ին իրենց հանգստավայր ընտրել Ռէսթին դէմ գտնուած սրճարանը։

(Նոյն)

ԴԵՂԻՆ ՀԱՆՔ ՄԸ

— Աղէկ ըսիր, իմացայ որ Հիւրմիւզ կաթիլի եկեղեցիէն պիտի հեռանայ եղեր։

— Չը գիտեմ, միայն սա միջոցին Բերպի մէջ դեղին հանքի խնդիր մը կայ... որ կը հետաքրքրէ նոյն իսկ հերանները։

ԹՕԼԱՆ

Նախնորդութեամբ Պէտիկրապետի
«Գոհարիկի»

Ո՛վ է խելօքն այն տղան,
Մեծ քիթ, աղւոր, անման,
Կարճ հասակով, սեւ աչքով,
Բայց գրածները ետման։

Ո՛հ այն տղան

է մեր Թօլան։

Երբոր երթայ դէպ իզմիր

Բերել չամիչ ու խնձիր,

Դուն չես կրնար որոշել

Ո՛վ է այն, ո՞վ կեղծ պատիր։

Ո՛հ այն տղան

է մեր Թօլան։

Երբոր մարդիկ բարկանան,

Քացախ խմել պէտք դգան,

Դու չես գիտեր ո՞վ է լաւ

Քացախ ծախող խիստ աժան։

Ո՛հ այն տղան

է մեր Թօլան։

Ո՛վ է խելօքն այն տղան,

Ուշոր քիթով անման,

Մեր Բարձեցիք շատ անգամ

Իր այդ քիթին կը խնդան։

Ո՛հ այն տղան

է մեր Թօլան։

ԹԵՔ-ԹԵՔ ԱԽԱՐ

Քարձի-գիւղ

ՍԱԿԱՐԱՆ

16/1 Մարտ 1909

Պրուսացի հրապարակ
Bourse de Brousse

Նարըճա	բաց.	5 2/2
»	գոց.	2 1/2 »
Շաքանակ	բաց.	2 »
»	գոց.	0,75 »
Մետաքս	բաց.	20 »
»	գոց.	12 1/2 »
Բամպակ	բաց.	3 »
»	գոց.	0

×

17/2 Մարտ 1909

Ղալաթիոյ հրապարակ
Bourse de Galata

Նարըճա	բաց.	—
»	գոց.	—
Շաքանակ	բաց.	—
»	գոց.	—
Մետաքս	բաց.	—
»	գոց.	—

ԲԱՄՊԱԿ

Գողու շոգենաւով և նաւապետութեամբ Համաթի պէյի, մեծաքանակ ներածում, ոգեւորութիւն Ղալաթիոյ քարափը. գիներու անհաւատալի բարձրացում. մթերանոց Գուգաբու՝ Ալլա. Պատրիարքարան, մասնաճիւղ՝ Գրնալը կղզի. այս ապրանքին ամենատաշնուագոյն տեսակէն նմոյշ մը ի տես դրուած է Պատրիարքարանի մէջ՝ փոխանորդ Հայր Սուրբին վրայի սենեակը։

ԸՆԿԵՐ ՊՈՐՍԱ

ԵՐԿՈՒՇԱԲԻ «ԿԱՎՈՐՇ»

ԱՐՏՈՆԱՏԵՐ Ա. ՍԱԿԱՆԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. ՍԱԿԱՆԱՆ